ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/623/2024-2025-1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **17 հունիսի 2025թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Լիլիթ Ալեքսանյանի, Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2025 թվականի հունիսի 17-ին քննելով ՀՀ ՊԵԿ Հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 3 բաժնի գլխավոր հարկային տեսուչ Մարտունի Վազգենի Թորոյանի կողմից պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/623/2024-2025 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթները, էլեկտրոնային հայտարարագրերի ռեեստրի տվյալների ուսումնասիրության արդյունքներով, պարզել է, որ ՀՀ ՊԵԿ Հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 3 բաժնի գլխավոր հարկային տեսուչ Մարտունի Վազգենի Թորոյանի Հայտարարագիրը հանձնված և հրապարակված հայտարարագրերի ցանկում առկա չէ:

1.2 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 01/3316/24-2024 գրությամբ Մարտունի Վազգենի Թորոյանին ծանուցում է ուղարկվել Հայտարարագիրը չներկայացնելու վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ներկայացնել համապատասխան հայտարարագիրը: Նույն ծանուցմամբ հայտնվել է, որ նշված ժամկետի ընթացքում Հայտարարագիրը չներկայացնելու դեպքում ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը, ժամը՝ 16:15-ին հրավիրվում է Հանձնաժողով՝ իր մասնակցությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար:

Նշված ծանուցումը Մարտունի Վազգենի Թորոյանի կողմից ստացվել է 2024 թվականի հոկտեմբերի 23-ին: Սակայն, ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում Հայտարարագիրը չի ներկայացվել:

1.3 2025 թվականի նոյեմբերի 25-ին պատշաճ ծանուցված Մարտունի Վազգենի Թորոյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ/739/24 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.4 Հանձնաժողովի կողմից 2025 թվականի ապրիլի 10-ին Մարտունի Վազգենի Թորոյանին է հասցեագրվել թիվ 01/1495-2025 գրությունը՝ խնդրելով գրությունը ստանալուց հետո 3-րդ աշխատանքային օրը, ժամը՝ 10:30-ին ներկայանալ Հանձնաժողով Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու համար, սակայն փոստային առաքանին Մարտունի Վազգենի Թորոյանի կողմից չի ստացվել, ուստի հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1 հոդվածի 14-15-րդ մասերի դրույթները, վերոնշյալ ծանուցումը 2025

թվականի ապրիլի 29-ին տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

1.5 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Մարտունի Վազգենի Թորոյանը «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիրը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելուց հետո չի ներկայացրել Հանձնաժողով:

1.6 ՎԻՎ/623/2024-2025-1 գործով նշանակված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրը՝ 2025 թվականի հունիսի 17-ին, Հանձնաժողովը հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի կարգավորումները, այն է՝ վարչական ակտի հասցեատերը բացակայում է, և վարչական մարմինը, նախքան վարչական ակտ ընդունելը, անհրաժեշտ է համարում նրա ներկայությունը՝ վարույթին առնչվող որոշ կարևոր հանգամանքներ նրանից պարզելու համար որոշեց թիվ ՎԻՎ/623/2024-2025 վարչական գործի վարույթը կասեցնել:

Նիստի ընթացքում սույն գործով քննարկվող փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմինը կարող է կասեցնել վարչական վարույթը, եթե վարչական ակտի հասցեատերը բացակայում է, և վարչական մարմինը, նախքան վարչական ակտ ընդունելը, անհրաժեշտ է համարում նրա

ներկայությունը՝ վարույթին առնչվող որոշ կարևոր հանգամանքներ նրանից պարզելու համար.

3. Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ:

4. Օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է հետևյալ հարցերը՝

1) տվյալ գործի քննությունը վերաբերում է, արդյոք, իր իրավասությանը.

2) ճիշտ են կազմվել, արդյոք, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը.

3) գործի քննությանը մասնակցող անձինք ծանուցվել են, արդյոք, դրա քննության ժամանակի և տեղի մասին.

4) պահանջվել են, արդյոք, անհրաժեշտ լրացուցիչ նյութեր.

5) վարչական պատասխանատվության ենթարկվող անձի, տուժողի, օրինական ներկայացուցիչների, փաստաբանի միջնորդությունների մասին:

Նիստի ընթացքում Հանձնաժողովը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ, ՀՀ Ծակքար համայնքի ղեկավար Գվիդոն Ավետիսյանի ընտանիքի անդամ Ռիմա Ռաֆիկի Ավետիսյանը, որպես գործի քննությանը մասնակցող անձ, 2025 թվականի ապրիլի 25-ին՝ նիստի օրը, վարույթի մասնակցի բացակայության հիմքով, կասեցրել է գործի վարույթը:

Նշվածի հաշվառմամբ, Հանձնաժողովն նշանակել է նոր գործի քննություն՝ 2025 թվականի հուլիսի 10-ին:

Օրենսգրքի 246.2-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթը կարող է կասեցվել կամ երկարաձգվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ *վարչական մարմինը կարող է կասեցնել վարչական վարույթը*, եթե վարչական ակտի հասցեատերը բացակայում է, և վարչական մարմինը, նախքան վարչական ակտ ընդունելը, անհրաժեշտ է համարում նրա ներկայությունը՝ վարույթին առնչվող որոշ կարևոր հանգամանքներ նրանից պարզելու համար.

Նույն հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» կետերով, ինչպես նաև 2-րդ մասով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցման հիմք դարձած *հանգամանքները վերանալուց հետո, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը*:

Հաշվի առնելով նշված փաստական հանգամանքները և ղեկավարվելով Օրենսգրքի 246.2-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով և 4-րդ մասով, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ՊԵԿ Հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 3 բաժնի գլխավոր հարկային տեսուչ Մարտունի Վազգենի Թորոյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2024 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու փաստի առթիվ հարուցված ՎԻՎ/623/2024-2025 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կասեցնել մինչև կասեցման հիմք դարձած հանգամանքների վերանալը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**